ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 655-Ա

06 նոյեմբերի 2026 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՐԱԽՏԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԴՊՐՈՑԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դրախտիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահ Համբարձում Սաֆարյանին՝ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ:

06.11.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՅԱՆ
ք. Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի նոյեմբերի 6 -ի
N 655-Ա որոշման

Կ Ա Զ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՐԱԽՏԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԴՊՐՈՑԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Համբարձում Սաֆարյան	-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ
Դավիթ Սահակյան	-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Նազիկ Բաբաքյոխյան	-հանձնող
Արարատ Մովսիսյան	-ընդունող
Սիրուշ Մկրտչյան	-հաշվապահ

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2026-11-06 13:45:59 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 08428824

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ